ՀՏԴ 941.479.25

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԼՂՀ-ՈՒՄ (1992թ. մարտ)

Տ.Վ.Հակոբյան
պատմության ամբիոն

1992 թվականի փետրվար-մարտ ամիսներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (ԼՂՀ) ռազմական գործողությունների ուժգնացման հետևանքով հակամարտության խաղաղ կարգավորումը կրկին գրավեց միջազգային հանրության ուշադրությունը:

Փետրվարի 27-28-ը Պրահայում տեղի ունեցավ ԵԱՀԽ-ի նիստ, որտեղ քննարկվեց Լեռնային Ղարաբաղին (ԼՂ) վերաբերվող հիմնախնդիրը: Նկատում առաջարկվեց կրակը դադարեցնելու նպատակով ճնշում գործադրել Հայաստանի եւ Ադրբեջանի իշխանությունների վրա եւ հարցը կարգավորեն խաղաղ բանակցությունների սեղանի շուրջ[1]:

Մարտի 4-ին Ռուսաստանի եւ Ղազախստանի նախագահները հանդես եկան հարցի խաղաղ կարգավորման նոր միջնորդական նախաձեռնությամբ[2]: Սակայն միջազգային ջանքերը ոչ մի այդպիսի չտվեցին, քանի որ Ադրբեջանի իշխանությունները մերժում էին ԼՂ-ի հիմնահարցի վերաբերյալ խաղաղ ճանապարհով ամեն մի առաջարկ, սակայն իրադրությունը տարածաշրջանում ավելի բարդացավ: Դրան նպաստեց նաեւ ԱՊՀ գինված ուժերի 366-րդ գնդի դուրս բերումը Սումգայիթից: Հայկական ուժերին հաջողվեց որոշակի չափով առաջավել գնդին պատկանող զենքն ու զինամթերքը, ինչպես նաեւ զինտեխնիկան, որն ենթակա էր վերանոցման:

Մարտի 4-ին այդրբեջանական զինված ուժերը հարձակվեցին Ղազանչի վրա: Երկօրյա մարտերից հետո թշնամուն մեծ կորուստների գնով հաջողվեց գրավել այն[3]:

Օրեցօր սաստկացող մարտական գործողությունները հրամայական պահանջում էին կատարելագործել ոչ միայն ինքնապաշտպանության ուժերի կառուցվածքային ու մարտական բնութագրերը, այլ նաեւ կառավարման համակարգը: ԼՂՀ Գերագույն խորհրդի (ԳԽ) նախագահության 1992թ. մարտի 4-ի նիստի ժամանակ որոշվեց ինքնապաշտպանության ուժերի (ԻՊՈՒ) հրամանատար նշանակել գնդապետ Ա.Տեր-Թադեւոսյանին[1]: Նույն օրը հաստատվեց նաեւ ԼՂՀ պաշտպանության խորհրդի (ՊԽ) կազմը, որը ներկայացրել էր ԼՂՀ ԳԽ նախագահ Ա.Մկրտչյանը: ՊԽ-ի կազմում ընդգրկվեցին՝ Ա.Մկրտչյանը (նախագահ), Օ.Եսայանը, Վ.Բալայանը, Ս.Ատարյանը, Ա.Տեր-Թադեւոսյանը, Ռ.Քոչարյանը եւ Ա.Կարապետյանը[2]: Այնուհետեւ նախագահությունը հանձնարարեց ՊԽ-ին՝ ԼՂՀ ԳԽ-ի պաշտպանության եւ անվտանգության, պետական շինարարության, իրավական հարցերի եւ օրենսդրության ամրապնդման հանձնաժողովների հետ հստակեցնել նախապատրաստել եւ ԼՂՀ ԳԽ նախագահության քննարկմանը ներկայացնել «Պաշտպանության խորհրդի մասին», «Ինքնապաշտպանության ուժերի մասին» կանոնադրությունների նախագիծը:

Հաջորդ օրը մարտի 5-ին ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը սկսեց քննարկել կառավարության մի շարք պաշտոնների նշանակման, ԼՂՀ նախարարների խորհրդի (ՆԽ) կազմի հաստատելու, ԼՂՀ կառավարության անհատական կազմի, որոշումների նախագծերը[3]: Ըստ «ԼՂՀ Նախարարների խորհրդի մասին» ԼՂՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետի հաստատվեց ԼՂՀ կառավարությունը հետեւյալ կազմով. Օ.Ե.Եսայան՝ ԼՂՀ ՆԽ-ի նախագահ, Ռ.Ս.Առուշանյան՝ ԼՂՀ ՆԽ նախագահի առաջին տեղակալ, Ա.Մ.Ծատրյան՝ ԼՂՀ ՆԽ-ի նախագահի տեղակալի եւ ԼՂՀ գյուղատնտեսության եւ պարենամթերքների նախարարի պաշտոնակատար, Ա.Ա.Իսագուլով՝ ՆԳ-ի նախարարի պաշտոնակատար, Ս.Ա.Թեւոսյան՝ ԼՂՀ ֆինանսների նախարարի պաշտոնակատար, Յու.Գ.Դավթյան՝ ԼՂՀ վիճակագրության պետական վարչության պետի պաշտոնակատար, Է.Շ.Շահրամանյան՝ շինարարության պետական կոմիտեի նախագահի պաշտոնակատար, Յու.Ռ.Ներսիսյան՝ տպագրության, պոլիգրաֆիայի, հրատարակչության եւ գրքի առեւտրի պետական կոմիտեի նախագահի պաշտոնակատար, Վ.Հ.Թովմասյան՝ ԼՂՀ ՆԽ-ի գործերի կառավարիչ: Հանձնարարվեց հանրապետության կառավարությանը առաջնորդվելով

---

[1]Ա.Տեր-Թադեւոսյանը (Կոմանդոսը) կազմակերպելով եւ իրականացնելով մի շարք ռազմագործողություններ, բավական մեծ հեղինակություն ու վստահություն էր վաստակել, արժանացել համընդհանուր ճանաչման:

«ԼՂՀ Նախարարների խորհրդի մասին» ԼՂՀ օրենքով, անցնել իր լիազորությունների կատարմանը:

Այնուհետեւ «ԼՂՀ Նախարարների խորհրդի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն, ԼՂՀ ԳԽ-ը որոշեց հաստատել ԼՂՀ ՆԽ-ը հետեւյալ կազմով. Օ.Ե.Եսայան՝ ԼՂՀ ՆԽ-ի նախագահ, Ք.Ս.Առուշանյան՝ ԼՂՀ ՆԽ-ի նախագահի առաջին տեղակալ, Ա.Ծատրյան՝ ԼՂՀ ՆԽ նախագահի տեղակալ եւ ԼՂՀ գյուղատնտեսության եւ պարենամթերքների նախարարի պաշտոնակատար: Այսպիսով, հիմնականում ձեւավորվեց ԼՂՀ գործադիր իշխանությունը, որը պետք է լուծեր երկրին վերաբերվող սոցիալ-տնտեսական եւ մի շարք այլ հարցեր: Կազմավորելով ԼՂՀ կառավարությունը, ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը գործադիր իշխանության մի շարք լիազորություններ դեռ վերապահում էր իր վրա:

Մարտի 6-ին ծանր պաշտպանական մարտեր տեղի ունեցան Ասկերանի եւ Կիչանի մատույցներում: Մարտի 11-ին հանձնված դիրքերը ետ վերադարձնելու նպատակով հակահարձակում ձեռնարկեցին հայկական ԻՊՈՒ-ը: Նույն օրը հայ ազատամարտիկները փայլուն ռազմական գործողություն ձեռնարկեցին Սրխավենդի հատվածում՝ ճնշելով գյուղում տեղակայված ադրբեջանական կրակակետերը[6]: Այդ օրերին ազատագրվեցին նաեւ նրա հարակից ադրբեջանական բնակավայրերը՝ Մանիքլուն, Խաթունբեյլուն, Բաշ-Գյունեփայան եւ Օրթափայան: Ադրբեջանցիները Աղդամից փորձեցին օգնության հասնել, բայց է՛ական ոչ մի արդյունքի չհասան:

Մարտի 12-ին ԼՂՀ ԳԽ-ի նախագահ Ա.Մկրտչյանն ընդունեց Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի փոխխոսնակ, բարոնուհի Քերոլայն Քոքսին, որն իր հետ Արցախ էր բերել մեծ քանակությամբ դեղորայք եւ մանկական սնունդ: Նույն օրը կայացավ հեռախոսազրույց ԼՂՀ ԳԽ-ի նախագահ Ա.Մկրտչյանի եւ Ադրբեջանի ԳԽ նախագահ Յ.Մամեդովի միջեւ, ձեռք բերվեց պայմանավորվածություն ժամանակավոր հրադադարի մասին, սակայն ադրբեջանական կողմը խախտեց այն՝ հրետակոծելով Ասկերան շրջկենտրոնը: Այնուհետեւ մարտի 14-ին առավոտյան ժամը 9-ին Ադրբեջանի արտգործնախարար Հ.Հասանովը զանգահարեց ԼՂՀ ԳԽ-ի նախագահին եւ մեղադրեց ղարաբաղյան կողմին պայմանավորվածության խախտման համար:

Մարտի 17-ին Արցախ ժամանեցին ԿԽՄԿ-ի լիազոր ներկայացուցիչներ Ռոլան Սիդլերը եւ Ֆրանսուա Բեննը՝ տարածաշրջանում իրադրությանը ծանոթանալու, հումանիտար օգնություն ցուցաբերելու եւ Ստեփանակերտում գրասենյակ բացելու նպատակով:

Նրանց ընդունեց ԼՂՀ ԳԽ-ի նախագահ Ա.Մկրտչյանը՝ նշելով որ ԼՂՀ իշխանությունները պատրաստ են այդ ծրագրի իրականացմանը: Նույն օրը տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ-ի նախագահության նիստ, որը լսեց Ա.Մկրտչյանի հաղորդումը հանրապետության ռազմա-քաղաքական եւ միջազգային իրավիճակի մասին: Այնուհետեւ քննարկվեց Ստեփանակերտի օդանավակայանի գործունեության մասին որոշման նախագիծը: Ելնելով ստեղծված ծանր իրավիճակում հանրապետության տնտեսության եւ պաշտպանության համար օդանավակայանի կարեւոր նշանակությունից, ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը որոշեց Ստեփանակերտի օդանավակայանում սահմանել աշխատանքային հատուկ ռեժիմ եւ օգտագործել այն առաջին հերթին ժողովրդա-տնտեսական եւ պաշտպանական բեռների փոխադրման համար: ԼՂՀ ՆԽ-ին հանձնարարվեց կարճ ժամկետում լուծել օդանավակայանի ղեկավարության, տեխնիկական եւ սպասարկող ծառայությունների կազմավորման հարցերը եւ ապահովել նրանց կանոնավոր գործունեությունը[7]:

Հանրապետությունից քաղաքացիների մեկնելու կանոնակարգ մշակելու եւ մեկնելը կարգավորելու նպատակով ստեղծվեց նաեւ ժամանակավոր հանձնաժողով՝ Հրանտ Խաչատրյանի գլխավորությամբ: Հանձնարարվեց օդանավակայանի վարչությանը խստորեն առաջնորդվել հանձնաժողովի մշակած կանոնակարգով, իսկ ՊԽ-ին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ օդանավակայանի անվտանգությունն ու կարգուկանոնն ապահովելու համար:

Այն ճիշտ ռազմավարական քայլ էր եւ արվեց այն նպատակով որպեսզի չթուլացվի պատերազմի հետեւանքով ԼՂՀ քաղաքացիների՝ հատկապես արական սեռի արտահոսքը երկրից:

Իսկ վերջում ԳԽ-ի նախագահությունը որոշեց հանդես գալ հայտարարությամբ ղարաբաղյան հիմնահարցի շուրջ միջազգային նախաձեռնությունների վերաբերյալ: Հայտարարության տեքստում նշված էր. «Բազմաթիվ պետությունների, միջազգային կազմակերպությունների ուշադրությունը վերջին ժամանակներս սեւեռված է ԼՂՀ-ը, որը ռազմական ագրեսիայի է ենթարկվում Ադրբեջանի Հանրապետության կողմից:

Ողջունելով բազմաթիվ երկրների եւ միջազգային կազմակերպությունների շահագրգռվածությունը մարտական գործողությունների դադարեցման գործում, ԼՂՀ ԳԽ-ի

նախագահությունը հայտարարում է, որ ստեղծված կացությունից ելք որոնելը առանց ԼՂՀ-ի լիազոր ներկայացուցիչների մասնակցության, չի կարող դրական փոփոխություններ առաջ բերել տարածաշրջանում:

ԼՂՀ-ն ռազմական ագրեսիայի օբյեկտ է եւ պարտադիր է նրա ներկայությունը ԼՂՀ շահերը շոշափող ամեն մի խաղաղարար գործընթացին»*:

Ինչպես նշեցինք, տարածաշրջանի անկայուն իրավիճակից անհանգստացած միջազգային հանրությունը կրկին ճիգեր գործադրեց՝ ռազմաքաղաքական հակամարտությունը խաղաղ ճանապարհով կարգավորելու նպատակով: Մարտի 16-ին ԵԱՀԽ-ն որոշեց տարածաշրջան ուղարկել իր ներկայացուցիչներին՝ իրադրությունը տեղում ուսումնասիրելու համար: Մարտի 20-ին Ստեփանակերտ ժամանեցին ԱՄՆ-ի պետքարտուղար Սայրուս Վենսը եւ ԵԱՀԽ-ի ներկայացուցիչ Յանոշ Կուբիչը: Մինչ այդ նրանք հանդիպումներ էին ունեցել Բաքվի եւ Երեւանի իշխանությունների հետ: Նրանք հանդիպեցին նաեւ ԼՂՀ իշխանությունների հետ: Հանդիպմանը մասնակցում էին ԼՂՀ ԳԽ-ի նախագահ Ա.Մկրտչյանը, ԼՂՀ ԳԽ-ի քարտուղար Վ.Հակոբյանը, ԼՂՀ ՆԽ-ի նախագահ Օ.Եսայանը եւ այլք: Նրանք խոստացան տարածաշրջանի իրադրության մասին զեկուցել ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդին եւ անհապաղ միջոցներ ձեռնարկել հարցը խաղաղ կարգավորելու նպատակով*:

Մարտի 20-ին հակամարտության տարածաշրջան այցելեց նաեւ Իրանի Իսլամական Հանրապետության արտգործնախարարի տեղակալ Մ.Վայեզին, որի նպատակն էր 7 օրվա տեւողությամբ մարտական գործողությունների դադարեցման պայմանավորվածություն ձեռք բերելը: Նա հանդիպեց Ա.Մկրտչյանի հետ, որն իր պատրաստակամությունը հայտնեց տվյալ խնդրի վերաբերյալ: Նույն օրը այդ պայմանավորվածությունը ձեռք բերվեց, սակայն ադրբեջանական կողմը խախտեց այն, հարձակում ձեռնարկեց փորձելով զավթել Մարտունու մուտակա բարձունքը, սակայն հետ շպրտվեց: Կատարվածի վերաբերյալ մարտի 21-ին Իրանի Իսլամական Հանրապետության ԱԳՆ-ն Ադրբեջանին բողոք ներկայացրեց «պաշտոնական»[10].

Իսկ ԵԱՀԽ խորհրդի առաջին լրացուցիչ հանդիպմանը (մարտի 24-ին) որոշվեց ԵԱՀԽ հավանու ներքո Սինսկում (Բելոռուս) ԼՂ-ի խնդրով խորհրդաժողով հրավիրել, որը «Ճգնաժամի խաղաղ կարգավորման նպատակով բանակցությունների համար կապահովի մշտապես գործող հանձնաժողով»[11]: Խորհրդի որոշմամբ Ադրբեջանի, Հայաստանի, Բելոռուսի, Գերմանիայի, Իտալիայի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Թուրքիայի, Ֆրանսիայի, Չեխիայի եւ Սլովակիայի Ֆեդերատիվ Հանրապետության ու Շվեդիայի ներկայացուցիչների հետ խորհրդաժողովին պետք է հրավիրվեին նաեւ ԼՂ-ի օրինական իշխանությունները, բայց որպես շահագրգիռ կողմ: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ խորհրդաժողովի մասնակիցների մասին որոշումն ընդունվել է այն օրերին, երբ ԼՂՀ-ն գտնվում էր շրջափակման մեջ եւ հումանիտար աղետի եզրին: Մինսկի խորհրդաժողովի առաջին նախագահ Մարիո Ռաֆայելիի խոստովանությամբ անհետացման սպառնալիքի տակ էր հայտնվել բանակցությունների բուն առարկան[12]:

ԼՂ-ի բանակցային կարգավիճակի հստակ կանոնակարգման բացակայությունը դարաբաղյան կողմի իրավունքների եւ պարտականությունների երկակի մեկնաբանման պատճառ դարձավ: Այսօր էլ այդ հանգամանքը խաղաղարար գործընթացի արդյունավետ առաջընթացի հիմնական խոչընդոտներից մեկն է:

Հատկանշական է, որ Մինսկի խումբը ստեղծելու մասին որոշման ընդունումից անմիջապես հետո ՍԱԿ-ի Անվտանգության խորհուրդը 1992 թվականի մարտի 26-ին որոշեց ձեռնպահ մնալ ԼՂ-ում որեւէ խաղաղարար գործողության մասնակցելուց՝ հօգուտ ԵԱՀԽ ջանքերին աջակցելու մասին որոշման*:

Մարտի 21-ին Աղդամով Ստեփանակերտ ժամանեց Ֆրանսիայի սոցիալական եւ հումանիտար օգնության պետնախարար Բեռնար Կուշնիրը, ԵԱՀԽ-ի ներկայացուցիչ, Չեխիայի ԱԳՆ աշխատակից Ժոզեֆ Բրաունը, որոնց նպատակն էր ԼՂՀ-ին հումանիտար օգնություն

---

* ԵԱՀԽ խորհրդի նման դիրքորոշումը աղավաղեց հիմնահարցի էությունը, եւ Լեռնային Ղարաբաղի իշխանությունները բնականաբար պահանջում էին որոշակիություն: Այդ պատճառով էլ Մինսկի խորհրդաժողովի գումարման նախապատրաստման առաջին նիստերին Լեռնային Ղարաբաղի պատվիրակությունը բացակայում էր: Ղարաբաղի ներկայացուցիչները մասնակցեցին լոկ Հռոմի երրորդ նիստին, ըստ որում միայն մեկ՝ իր մասնակցության կարգավիճակի հարցով: Հետագայում Մինսկի խմբի գործունեությունը կանոնավորապես շարունակվում էր, մինչեւ 1993 թվականի սեպտեմբերի 28-ին նրա կողմից ներկայացված «Միջոցառումների նորացված ժամանակացույցը» չստացավ հակամարտության կողմերի աջակցությունը:

ցուցաբերել, քնակչությանը առաջին անհրաժեշտության դեղորայքով ապահովելը[11]: Նրանց ընդունեց ԼՂՀ ԳԽ-ի նախագահ Ա.Մկրտչյանը, ՆԽ-ի նախագահ Օ.Եսայանը, ԼՂՀ ԳԽ-ի քարտուղար Վ.Հակոբյանը եւ այլ պաշտոնատար անձիք:

Մարտի 24-ին տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ-ի նախագահության նիստ: Մարտակերտի, Մարտունու, Հադրութի շրջխորհուրդների գործկոմների նախագահներ Ն.Օհանջանյանը, Ս.Մեյրանյանը Գ.Հայրապետյանը ներկայացրեցին նշված շրջաններում տիրող իրավիճակը: Ստեփանակերտի քաղխորհրդի նախագահի պաշտոնակատար Վ. Գեւորգյանն իր հերթին ներկայացրեց Ստեփանակերտ քաղաքում տիրող իրավիճակը եւ ժողովրդական պատգամավորների քաղխորհրդի գործկոմի գործունեությունը: ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը հանձնարարեց ժողովրդական պատգամավորների Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմին քննարկել եւ միջոցներ ձեռնարկել նախագահության նիստում բարձրացված հարցերի լուծման ուղղությամբ եւ 15-օրյա ժամկետում տեղեկացնել կատարված աշխատանքների մասին[14]:

Ելնելով ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրադրությունից եւ ղեկավարվելով «ԼՂՀ Նախարարների խորհրդի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածով, հանրապետության անվտանգության եւ պաշտպանության ապահովման նպատակով անհետաձգելի միջոցառումների մշակման ու իրագործման շրջանակներում, մինչեւ ԼՂՀ պաշտպանության նախարարության կազմավորումը, 1992թ. մարտի 26-ին ԼՂՀ ՆԽ-ի առընթեր ստեղծվեց ԼՂՀ Պաշտպանության կոմիտե[15]:

Հանրապետությունում ներքին քաղաքական կայունություն պահպանելու նպատակով ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը ներքին պայմանավորվածության համաձայն, որոշեց ԼՂՀ Պաշտպանության կոմիտեի (ՊԿ) նախագահ նշանակել Սերժ Սարգսյանին, որին հանձնարարվեց 10-օրյա ժամկետում առաջարկություններ ներկայացնել ՊԿ-ի կառուցվածքի, կանոնադրության եւ անվանակազմի մասին: Կոմիտեն իր ողջ գործունեությունը պետք է կազմակերպեր ԼՂՀ ԳԽ-ի եւ ՆԽ-ի որոշումների ու կարգադրությունների հիման վրա: Այդ որոշմից հետո ԳԽ-ի նախագահությունը նպատակահարմար գտավ, որ ԼՂՀ ԳԽ-ի նախագահ Արթուր Մկրտչյանը մի անգամ եւս հանդիպի ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ երկկողմ հարաբերությունների բարելավման նպատակով: Ա.Մկրտչյանը Երեւան մեկնեց մարտի 30-ին եւ հաջորդ օրը հանդիպեց ՀՀ նախագահի հետ, սակայն բանակցությունները կրկին արդյունք չտվեցին: Վերջինս Ա.Մկրտչյանին նորից հասկացնել տվեց, որ իր տեղը զիջի ՀՀՇ-ական ուրեմ, մեկին, այլ կերպ Հայաստանը կայող է դադարեցնել Արցախին ռազմական օգնության ցուցաբերելը[16]:

Ինչպես ցույց է տալիս պատմությունը, Ղարաբաղյան շարժումը սկզբնավորվեց երիտասարդ ռազմիկների ուժերով, որոնց այնուհետեւ հարեց տեղական կոսակցական նոմենկլատուրան՝ որոշ ժամանակաշրջան պահելով ե՛ւ իշխանությունը, ե՛ւ շարժման հսկողությունը: Համապատասխանաբար շարժման մեջ ձեւավորվեց երկու ուղղություն: Նոմենկլատուրան փասատրեն Ազրբեջանի ագրեսիային պատասխանում էր խաղաղարար երկխոսության քաղաքականությամբ, որը հետագայում չարդարացվեց, իսկ դրան զուգահեռ գնում էր այլ գործընթաց՝ ինքնապաշտպանական ջոկատների կազմավորումը, պարտիզանական շարժումը բռնազավթված գյուղերում, որը գլխավորում էին ռազիկալները: Այս երկրորդ ուղղության հաթանակը նշանավորվեց Ստեփանակերտի նոմենկլատուրային քաղաքականության ավարտով: Եւ այդ խնդրում վճռական դեր խաղաց հենց Դաշնակցության գործունեությունը Արցախում: Դաշնակցականների ակտիվությունը, ըստ երեւույթին, գործի մղեց նաեւ ՀՀՇ-ին, որի խորհրդակով նույնպես սկսեց Ղարաբաղին զենք մատակարարվել[17]: Սա չէր կարող ղարաբաղյան շարժման առաջնորդների խմբավորում չառաջացնել, հայտվեցին Տեր-Պետրոսյանի կողմնակիցներ, բայց ռազիկալների հիմնական մասը ընդրկվեցին Դաշնակցության մեջ: Դաշնակցականների հաղթանակը պարզապես դուր չեկավ «պաշտոնական» Հայաստանին, որի գլուխ էր կանգնած ՀՀՇ-ն: Եվ դա ցնցում էր Հայաստանի նոր իշխանության համար, որը սակավին չէր հասցրել հասկանալ, թե ինչ է կատարվում Արցախում: Սակայն հետաքրքրական է այն փաստը, որ ներքին կայունություն պահպանելու նպատակով պետական եւ ռազմական մի շարք պաշտոններ ԳԽ-ի նախագահության որոշումով հանձնվեցին ՀՀՇ-ի անդամներին: Իսկ ի՞նչն էր ստիպում ՀՀ նախագահին գնալ այդպիսի քայլի, պատճառը պարզ ու հասկանալի դարձավ հետագայում՝ ակտիվ մասնակցություն իր ներքաղաքական կյանքում. այսինքն՝ այն ժամանակվա երկու հիմնական բաղաքական ուժերից յուրաքանչյուրը ձգտում էր օգտագործել այդ ուժի՝ այդ գորեղ խաղաթաղթի: Սակայն Արցախի իշխանությունները որդեգրել էին չմիջամտելու քաղաքականությունը, լինել երրորդ ուժ եւ կախված չլինել Հայաստանի իրադարձություններից:

Փաստորեն «պաշտոնական» Հայաստանին մնաց Ղարաբաղի համար այս դժվարին պայմաններում գնալ առճակատման ԼՂՀ ղեկավարության հետ, եւ դա արվում էր բացահայտ:

Այսպիսով՝ իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ փետրվար-մարտ ամիսներին ԼՂՀ-ում սաստկացող ռազմական գործողությունների պայմաններում, դիմակայելով Ադրբեջանի բացահայտ ագրեսիային, Արցախում իշխանության հաստատված նոր ուժերը, փաստորեն, գտնվելով կրկնակի ճնշման տակ, անկախ կուսակցական պատկանելությունից կարողացան իրենց ուժերով, միջազգային իրավունքի բոլոր նորմերի համաձայն, ստեղծել իրավական եւ ժողովրդավարական մի պետություն, որին վիճակված էր դիմակայելու եւ պահպանելու իր անկախությունը, եւ փորձեցին ճիգեր գործադրել հարցը կարգավորելու խաղաղ բանակցությունների սեղանի շուրջ:

Ամփոփում

Արցախահայության ազգային ազատագրական շարժման սկզբնավորում ԼՂՀ ղեկավարությունը, գտնվելով ներքին եւ արտաքին ճնշման տակ, փորձեր էր ձեռնարկում ստեղծել միջազգային ժողովրդավարական չափանիշներին համապասխանող պետություն: Եվ միաժամանակ սաստկացող ռազմական գործողությունների պայմաններում դիմակայելով Ադրբեջանի ագրեսիային՝ փորձեց հարցը կարգավորել խաղաղ բանակցությունների սեղանի շուրջ:

Резюме

На начальном этапе национально-освободительного движения армянства Арцаха руководство НКР, находясь под внутренним и внешним давлением, пыталось создать государство, соответствующее международным демократическим стандартам. И в условиях одновременно усиливающихся военных действий, в противостоянии с азербайджанской агрессией оно попыталось решить вопрос за столом мирных переговоров.

Ծանոթագրություններ

1.Ղազարյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երեւան, 1997, էջ 366:
2. Վ.Բ.Հարությունյան, Իրադարձություններ Լեռնային Ղարաբաղում, Ժամանակագրություն, IV մաս, Եր.,1994,էջ 122:
3. Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետություն, Պատմական, աշխարհագրական, ազգաբաշխական, պատմաճարտարապետական տուեալներ, Անթիլիաս, 1992, էջ 51:
4. Մ.Ա.Հարությունյան, Արցախյան պատերազմի սկիզբը եւ Շուշիի ազատագրումը, Եր., 2000, էջ 68:
5. ԼՂՀ պետարխիվ, ֆ.254, ց.1, գ.2, էջ 11-14:
6. «Մարտիկ», թ. 8, 1998:
7. ԼՂՀ պետարխիվ, ֆ.254, ց.1, գ.2, էջ 25-26:
8. ԼՂՀ առաջին գումարման ԳԽ քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու Հանգուցյալ Վ.Հակոբյանի անձնական արխիվ:
9. Վ.Բ.Հարությունյան, նշվ. գիրքը, էջ 125-126:
10. Վ.Բ.Հարությունյան, նշվ. գիրքը, էջ126:
11. INTERNET աղբյուրներ /www.nkr.am/
12. «Մ.Ռաֆայելիի նամակը ԵԱՀԽ գործող նախագահին», 23 սեպտեմբերի 1992թ., /www.nkr.am/ կայք էջ:
13 Վ.Բ.Հարությունյան, նշվ. գիրքը, էջ 126-127:
14 ԼՂՀ պետարխիվ, ֆ.254, ց.1, գ.2, էջ 27-28:
15 Մ.Ա.Հարությունյան, նշվ. գիրքը, էջ70-71:
16. Հ.Աբրահամյան, Ճակատագրին ընդառաջ, փաստավավերագրական ակնարկ, Եր.,2001, էջ 160:
17. «Այժմ», 22-28 մայիս, 1996: